ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 186-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26.12.2002թ. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի ուժով՝ 7-րդ հոդվածի 2-րդ մասով, ավել օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչվում է փաստացի օգտագործողի սեփականության իրավունքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել քաղաքացի Հակոբ Կարապետի Հարությունյանի /ծնված՝ 01.08.1950թ./ սեփականության իրավունքը Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 369.7 քառ. մ գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ավել օգտագործվող 369.7 քառ. մ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 14
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 187

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼՆԵՐ ԿՆՅԱԶ ԶԱԽԱՐԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԵՎ ՍՎԵՏԻԿ ԱՐԱՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը և քաղաքացի Դավիթ Զաքարի Ադամյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի նախկին բնակիչներ, հանգուցյալներ Կնյազ Զախարի Ադամյանին /մահացած՝ 22.12.2014թ./ և Սվետիկ Արամի Գրիգորյանին /մահացած՝ 11.10.2013թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և բնակելի կառուցապատման հողը /կադաստրային ծածկագիր 10-042-0093-0006/ գրանցել Գլաձոր համայնք, Վերնաշեն բնակավայր, փողոց 4, թիվ 7 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 14
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 188

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0402 ՀԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 71 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:00-ին, Գլաձորի համայնքապետարանում անցկացնել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել աճուրդի մասին հայտարարության հրապարակումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 14
Գլաձոր համայնք

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ղեկավարի
2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 188 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքապետարանում տեղի կունենա Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.0402 հա բնակելի կառուցապատման /կադաստրային ծածկագիր 10-042-0059-0022/ հողամասի աճուրդ:

Հողամասի մեկնարկային գինը՝ 206 950 /երկու հարյուր վեց հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 100%-ը:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ /սերվիտուտներ/ չկան:

Աճուրդին մասնակցության հայտերի ընդունումը դադարեցվում է 2021 թվականի հոկտեմբերի 9-ին, ժամը 18:00-ին:

Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել մասնակցության վճարի անդորրագիր /վճարումը տեղում/:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Գլաձորի համայնքապետարան.

Հասցե՝ Գլաձոր համայնք, Գլաձոր բնակավայր փողոց 33 շենք 41, հեռախոս՝ /0281/ 2-34-46:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 189-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԳԵՎՈՐԳ ՎԱՍԻԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը և քաղաքացի Հասմիկ Հայրիկի Բադալյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Գևորգ Վասիլի Գրիգորյանին /մահացած՝ 17.01.2019թ./ և նրա ընտանիքի անդամներ՝ Հասմիկ Հայրիկի Բադալյանին /ծնված՝ 01.09.1957թ./, Վարդան Գևորգի Գրիգորյանին /ծնված՝ 09.03.1978թ./, Վարդիթեր Գևորգի Գրիգորյանին /ծնված՝ 23.05.1983թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և բնակելի կառուցապատման հողը /կադաստրային ծածկագիր 10-015-0067-0012/ գրանցել Գլաձոր համայնք, Գլաձոր բնակավայր, 4-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 12 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 16
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 190-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԹԻՎ 146-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 19-ի՝ «Գլաձոր համայնքի գլաձոր բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Ռաֆիկ Դավիթի Դավթյանին և նրա ընտանիքի անդամներին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և բնակելի կառուցապատման հողը համայնքի տվյալ հասցեում գրանցելու մասին» թիվ 146-Ա որոշման հիմնական մասը շարադրել ստորև նշված նոր խմբագրությամբ.

«Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Ռաֆիկ Դավիթի Դավթյանին /մահացած՝ 19.02.2008թ./ և նրա ընտանիքի անդամներ՝ Գյուլվարդ Մարգարի Մխեյանին /ծնված՝ 06.02.1952թ./, Էդվարդ Ռաֆիկի Դավթյանին /ծնված՝ 18.10.1973թ./, Արման Ռաֆիկի Դավթյանին /ծնված՝ 24.02.1975թ./, Լուսիկ Ռաֆիկի Պետրոսյանին /ծնված՝ 01.05.1978թ./ և Օֆելյա Ռաֆիկի Խաչատրյանին /ծնված՝ 02.08.1976թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և բնակելի կառուցապատման հողը /կադաստրային ծածկագիր 10-015-0069-0013/ գրանցել Գլաձոր համայնք, Գլաձոր բնակավայր, փողոց 6, թիվ 5 հասցեում:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 17
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 191

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետը, 100-րդ կետի 1-ին ենթակետը, Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 101-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1.1-րդ կետի ա. ենթակետի պահանջները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված N ԱՇ 69/20 լիազորագիրը և «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ից ստացված դիմումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տալ շինարարության թույլտվություններ՝ քաղաքացի Արմենակ Խաչատրյանին պատկանող ներքոնշյալ տարածքներում հետևյալ աշխատանքներն իրականացնելու համար.

1) 5968-ԷՄ նախագծման փաթեթի շրջանակներում՝ Գլաձորի համայնքի Գետափ բնակավայրի փողոց 12, փակուղի 1, թիվ 4 հասցեի էլեկտրամատակարարում՝ 0.22 կՎ,

2) 6060-ԷՄ նախագծման փաթեթի շրջանակներում՝ Գլաձորի համայնքի Գետափ բնակավայրի փողոց 18, փակուղի 12, թիվ 1 հասցեում՝ էլեկտրամատակարարում՝ 0.4 կՎ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 17
Գլաձոր համայնք